

ՄԱՌԻՐԱԳԱՆՈՒԹԱՒԱԿ

ԶԱՌԱԹԱԿԱՆ

30 ՓԱՐԱ

ՀԱՆՐԱՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ

ՓԱՐԱ 30

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ իւրաքանչիւր շրջանը 52 օրինակ է :
Շրջանին գինն է Պոլսոյ համար 40 դահեկան, կանխիկ :
Կիսաշրջանը՝ 26 թերթ 20 դահեկան : Հատը 30 փարսյ :
Գաւառացի համար շրջանին գինն է թղթատարի ծախքով
48, կիսաշրջանը 26 դահեկան :

Ծանուցման առիդը 2 դահեկան : Անվճար նամակ չ'ընդուն-
իր : Զի հրատարակուած գրութիւնք եւ չեն տրուիր :
Նամակ եւ գրութիւնք ուղղել՝
առ. Տիրան Գ. Փափազեան
ՊատրԱ՛րի ճատուէրի Քիթուպճանէի Ամս. մի թիւ 62

ԹԵՐ 12 Գ ՏԱՐԹ

1888

ՇԱԲԱԹ 10 ՍԵՊՏԵՄ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեսփոխանական ժողովոյ նախորդ նստին վերջին ա-
րարուածը բաւական չափագրով էր : Երեսփոխան տեսարք,
և մանաւանդ եկեղեցական հարք, յանկարծական եռան-
գով վառեալ՝ հոգեւորն ճառեր արտասանեցին ընդդէմ
պապական կոնդակին, մինչդեռ ժողովրդեան մէջ չչուի
մը կը բարձրանայր, « այս տեսակ ճառեր օղուտ չունին,
գործե՛ր պէտք է, ո՛ր է եկեղեցականութիւնը », ինչո՞ւ. չի
գօտեանդիր, ինչո՞ւ մախաղ և գաւաղան չափած՝ չերթար
ի քարոզութիւն իւր հօտին : Այս չչուիլը շատ իրաւացի
էր, որուն արձագանգ եղաւ Արփիար էֆէնտի Արփիարեան,
գէթ այս անգամ ճշմարտութիւն մը տուանց խնդրութիւնը
խօսելով :

Պատուարժան երեսփոխանն մ'ինչ, իսկ արեւոյաւ ծի-
րանադպետ եպիսկոպոսներու և թաւ շախոյր վարդապետ-
ներու անուաններ տալ, որոնք աւելի կը սիրեն Վոսփորի
գեղածիծաղ և հրապուրիչ տպանց վրայ գեղեցիկ քան ի-
րենց եկեղեցւոյն և հօտին ծառայել, խոյս տալով միշտ ա-
ռաջնորդական պաշտօններէ : Այս տեսակ կայսրապոսներու
և վարդապետներու անուանց երկար շարք մը մենք իսկ
կրնայինք տողել այս սխալակերտն մ'ջ, սակայն այդ
ճանձրոյթն աւելորդ կը համարինք, քանզի ժողովուրդն
թէ աստ և թէ ի գաւառս, արգէն ի բերան պերտած է
այդպիսեաց անուանքն :

Ըստ մեզ, լատինական և Բողոքական մարդոսոր-
դութեանց դէմ բողոքելէ և խօսքով կռուելէ աւելի լաւա-
գոյն է բարեփոխ և գործքով կռուիլ նոյն իսկ մեր եկեղե-
ցական գաւառն անսարքութեան դէմ. վասն զի նա է որ

իւր հօտին փարակը բոց թողած է օտարաց առջև : Բը-
նական է հարցունել, Հայաստանեայց եկեղեցւոյ հարու-
գատ ժողովուրդը եթէ հետզհետէ պաղի իւր եկեղեցիէն և
այլոց խոստմանց հետեի, ո՞վ աւելի կը տուժէ, ժողովո՞ր-
դըն թէ եկեղեցականութիւնն, և արդեօք առանց ժողովր-
դեան կրնա՞յ գոյութիւն ունենալ եկեղեցականութիւնն :

Միթէ եկած չէ՞ ժամանակն, որ մեր եկեղեցականու-
թիւնն սթափի և իրեն պատանացող վտանգը տեսնէ : Օտար-
ներն իսկ կը խոստովանին մեր սիրելի եկեղեցւոյ Առաքելա-
կան ուղղափառութիւնն և նախկին դարերու քրիստոնէա-
կան ու առաքելական ուղին, այլ չեն սքօղեր իրենց դար-
մանքն այսպիսի պատուական եկեղեցւոյ մը պաշտօնէու-
թեան դատապարտելի անտարբերութեան դէմ :

Այս ինչ անխելանութիւն է որ կը տիրէ մեր եկեղեցա-
կան դատուն մ'ջ, միթէ եկեղեցական նախնապետութիւնն
այլևս գոյութիւն չունի՞ր : Պատրիարքական թոյլտու ընթաց-
քին առջեւ մեր եկեղեցականք վարժուեցան տեսակ մը բռ-
բռստութեան, և գաւառները, եթէ բան գործ չունին՝ թող
առաջնորդ ընտրեն, մեր եկեղեցականք ուղին՝ երթան, չու-
ղին՝ չեն երթար : Կրօնական ժողովներն ալ իրարու խաբի
նայելով հանդիստ խղճով կընդունին հրաժարականներ, բա-
նաւոր լինին թէ անբանասոր :

Իրաց այս վիճակին առջև, զէթ Երեսփոխանութիւնը
պէտք է ձայն բառնայ և որոշում մը ներկայացնէ նորին-
ախր Պատրիարք Արքեպիսկոպոսին, յայտարարելով որ յետ այս-
օրիկ ով որ գաւառական առաջնորդ ընտրուի և անհիմն
պատուական յանձն չառնու, իրեն ցոյց տրուած պաշտօ-
նըն, Պատր. արքական իշխանութիւնն անմիջապէս դադ-
րեցնէ ղայնափախն աստ ի Պոլիս պաշտօն վարելէ :

Թերեւս միւր այս տողերն մեր պատուարժան պաշտօ-
նակցաց արդարացի դիտողութեանց նման՝ Ձայն բարբա-
ռոյ յանապատի լինին, մեր վրոյթը չէ, գէթ մեր խիղճը
հանգչեցուցած և մեր հրապարակագրի պաշտօնը կատա-

բաժ պիտի ըլլանք, միշտ յայտարարելով թէ՛ մեր Եկեղեցւոյ դէմ եկած ոտնձգութեանց և հալածանաց շարժառիթ ընծայողն նոյն իսկ մեր եկեղեցականութեան անտարբերութիւնն է:

Պահպանէ՛ տունդ, որ գող չի մանէ:

Ա.Զ.Ի. ԼՈՒՐԵՐ

Երէկի գումարեալ Ալգ. Ժողովոյ մէջ, Պատրիարքական ընտրութեան քուէտրվութիւնը կատարուելով՝ հետեւեալ արդիւնքը գոյացու.

Գեր. Բարթողիմէոս Արքեպիսկոպոս, Քուէ 39
Գեր. Խորէն Նար-պէյ Եպիսկոպոս . . . » 36

Յաջորդ նիստը, որ յառաջիկայ ուրբաթ տեղի պիտի ունենայ, համամարտականի քուէարկութիւնը կատարելու, ըստ օրինի քուէից բաժարցակ առաւելութեամբ՝ վերոյիշեալ երկու Սրբազաններէն մին պիտի հռչակէ Պատրիարք Կ. Պոլսոյ:

Վենէտոյ Միթիարեան Միաբանութեան անդամներէն Արթ. Սահակ վարդապետ Նաղարէթեան Հայաստանեայց մայրենի Եկեղեցւոյ ծոցը վերադարձաւ:

Կրօնական Ժողովն որոշեց յատուկ յանձնարարքով մը Տ. Սահակ վարդապետը ղրկել Արմաշու վանքն որպէս զի անդ վեղար տունու և ժամանակ մը մնայ:

Վսեմ. Ասպետ Զունդի կողմանէ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ նուիրեալ Յովակիմայ և Աննայի պատկերին օծման արարողութիւնը վաղը պիտի կատարուի ի ձեռն նոյն եկեղեցւոյ քարոզիչ Արթ. Տ. Վահան վարդապետ Յակօբեանի:

Կիմանանք թէ Սամաթիացիք արժանաւորապէս գրան չախչախը բռնել տուեր են Պ. Գ. Գալանթարեանցին, որ նոյն թաղի վարժարանաց տեսչութեան պաշտօնը կը վարէր, և դուրս մնացեր է:

Պ. Գալանթարեանց տեսնելով որ իւր ոսկեղօծ դեղահատերն ալ կ'ընող չմնաց ի Պօլիս, ժրարը կապելով տեղափոխուեր է ի Տրապիզոն:

Երթաս բարեա՛ւ ո՛ր խօսքերու և խոստումներու անսպառելի տոպրակ, երթաս բարեաւ կը պոռան քեզ ամբողջ Սամաթիոյ փողոցի սալայատակ-

ներն ու փողիները, զի մէկ ամսուան մէջ քառասուն հատիկ լիբա առնելով՝ քառասուն փարայի դործ չի տեսար:

0.

**

ՄԷԶԱՐՏԱ ԻԶՏԻՎԱՃ

Ս.յս անուամբ և տաճկերէն լեզուաւ թատերական նոր գրքոյկ մ'ալ հրատարակուած է վերջին օրերս. այս գրքոյկն իւր այլ թերութիւններով հանդերձ՝ ցարդ տեսնուածներուն վրայ սա առաւելութիւնն ունի որ նմանը չտեսնուած այլանդակութեամբ նորատեսակ սիրահարութիւն մը երեւան կը հանէ, յանձին Բիւզանդ. անուն ակնոցաւոր թեթևասլիկ երիտասարդի մը, որ կը յաջողի, ինչպէս նկարագրած է հեղինակն, հայհայելով, քամահելով և յանդիմանելով (ծեծելը մոռցած է անշուշտ, զի Բիւզանդի բալուց վրայ այդ բանն ալ կը նշմարուի) գրաւել ուսեալ և դաստիարակեալ աղջկան մը սիրտը և զայն օրինաւոր նշանածէն բաժնելով իւր դժոխային կամահաճութեանց գերին ընել:

Ե՛հ, ո՛վ կըսէ թէ կը պակսին մեր մէջ անոնք զորք ընելու սահմանեալ հեղինակներ ազգիս դժբաղդութենէն. ըստ մեզ ատոր հեղինակն կամ վարդապետացու մ'է, մեկուսացած կեանքի մը դատապարտեալ՝ որ համարձակած է իւր չտեսած, չըզացած ու չգիտցած բաներուն վրայ դրել և կամ թէ կանային հպարտութեան, սիրոյ և սիրահարութեան վրայ դադափար չունի բնաւ:

Որն ալ լինի նուազ պատուաբեր չէ հեղինակին համար. որ նոյնպէս բաւական վարձատրութիւն մը կ'ընայ համարուի:

ՊԱՏԵՄՈՒԹԵՒՆ

ԶՄԻՒՌՆԻՈՅ

ՎԵՐԶԻՆ ԱՆՅԻՑ

(Շար. Տես Թիւ 10)

«Իրաւ է թէ Մամուրեան և Մեղքիսեդէկ Սրբազան միեւնոյն ժամանակ, միեւնոյն հակառակորդաց միեւնոյն անկողութեան ենթարկուած էին չարաչար, սակայն հակամամուրեանք՝ իրենց բուն կրից առաւել գոհացում տալու և այդու իրենց նպատակին առաւել չուտ հասնելու համար ուխտած ու որոշած են ելեր ամեն հակակր-

ուժիւնք և ատկութիւն կեդրոնացնել միայն յանձին Գեր-
Մելքիսեդէկ Սրբազանի , զի այնպէս կը կարծեն եղեր թէ
հալածելով զՆորին Սրբազնութիւն , կը դիւրանայ իրենց
տապալել զՄամուրեան :

Տեղին է յիշելու սակայն , որ այն միջոցին ազգային
ներքին պոռակամանց և խառնակութեանց պատճառաւ
խանութարուած ու ցրուցան եղած Գաւառական ժողովն
վերակազմելու հարկն սկսած էր զբաղեցնել մտքերն , ու
րով պահ մը կը դադրէին հակակրթութիւնք , ընտրու-
թեան արդիւնքէն հոգ աւելլի որոշ եւ զորաւոր գոյնե-
րով երեւան ելնելու յուսախաբութեամբ : Ընտրութեան
պայքարն յաջող և արդիւնատու եղեր էր հակառակորդաց
զի այս վերջինք Սահմ. Գաւառական հրահանգի քուէ-
արկաներու համար արամադրած 10 դրուշի տուրքը մի-
այն հիմ բռնելով՝ հասարակ ժողովրդեան մէջն յաջողած
էին 3-400 քուէներ ծախու առնել , որք արդէն պատ-
րաստեալ ցանկէ մը ընդօրինակուած էին՝ եւ որոց մէջն
դուրս ձգուած էին բաժարցակապէս հակեղեւեան կու-
ռակցութեանց վերաբերող բոլոր կարող եւ ողջամիտ ազ-
գայինք :

Մինչ այս մինչ այն՝ ընտրութիւնք կը կատարուին եւ
Եղեւսեան խնդրոյն պատճառ եւ գլխաւոր շարժիչ էջիզ-
եան Մկրտիչ Էֆէնտի կը յաջողի գրաւել ատենապետու-
թեան աթոռն , իր չորջն ունենալով հինգ արհեստա-
ւարաց ուստա-պաշիններ եւ ազգային կենաց անհմուտ եւ
անփորձ սփանձի երեսփոխաններ , որք ի նշան իրենց
յաջողակութեան արդէն մի քանի փորձեր տուած էին
Եէնի-խանի սրճարանին մէջ . . եւ որոց համախմբումն
յԱզգ. առաջնորդարան , Ֆրանսայի 93ի ահալալու-
թեան օրերը կը յիշեցնէր : Միջոցին Սրբազան շուար-
եալ եւ ասպարան կը մնայ . զի խորապէս կզգայ թէ իւր
ներկայութիւնն անդ փոխան օգտակար ըլլալու այլ եւ
այլ նորանոր կրից ու անաշտ ատելութեանց դործի պի-
տի դառնայ , եւ իւր բոլոր ևռանդալից գործունէութիւնք
ամբողջութեամբ զատապարտուին , քանի որ անդ
այն պահուն , երբ բարեկիշատակ Վսեմ Յակոբ Էֆէնտի
Սպարթալեան կը յայտարարէ Գեր. առաջնորդին թէ՝
« իւր հովուական ընտրութեամբ կը մոռնայ ազգին դէմ
զգացած ցուռն , եւ Եղեւսեան խնդրոյն տալիս ազգին և
ժողովրդեան պատճառաւ ակամայ վեհապետ փոխարէն
կը խոստանայ եւ կուտայ նաեւ Ազգ. հիւանդանոցն ի
հիմանց վերականգնել » :

Այս յայտարարութեան գործադրութիւնն ընականաբար
ջուրն ինկած կը համարուէր Գաւառական ժողովոյ սոյն
ընտրութեամբ , վասն զի թող թէ նոցա ընտրութեան մի-
ջոցներու ասպրինատ որո՞թիւնն բաւական թուով կարող
և ազգեցիկ ազգայնոց անձնասիրութիւնն վիրաւորած
էր , այլ նաեւ երկիւղ կար թէ՛ այդ Գաւառ. ժողովն
միակ նպատակ սխտի ունենար իրեն յարատեւ վառ պա-
հել ժողովրդեան մէջ ատկութիւնն ընդ դէմ հակեղեւե-
ան կուռակցութեան . եւ նոյն իսկ ազգային շահոց
հակառակ անօրէնութիւններ ընելով նորանոր խնդիրներ
յարուցանել :

Այս երկիւղն հետզհետէ իրանալ կ'սկսէր . ամբար-
տաւանութիւնն ու կամահաճութիւնը շարժեալ մի օրի-
նակ կը տարածուէր ազգային ամեն գործերու վրայ մինչ
անդէն ժողովրդեան մեծագոյն մասը Եղեւսեան խնդրէն
յոգնած ու վատաւարեկ , իւր նվաթական վնասը դարմա-
նելու կ'զբաղէր և պահ մը կը ջանար մոռնալ ազգային
խնդիր և պէճ որ իւր ընտանեկան յանդէպ վրդոված էին :

Ազգային եկեղեցի բարեքումէն , որով խաբած էին
զիրենք , յուսահատ՝ երկաթագործն իր սալին , ոսկերիչն
իր հալոցին , վերմակագործն իր տակին եւ սափրիչն իր
ածելիին ու յիւանին քով դարձեր էր նորէն , անիծելով
ի սրտէ իւր անմտութիւնն որ պատճառ եղեր էր իրեն
ընդունայն այսչափ երկար տառապանք , բանտարկութիւն
ծնծ և անութիւն սիրայօժար կրելու միմիայն մի քա-
նիկներու հաճոյից գերին և շահոց գործին դառնալու
համար :

Գաւառական ժողովն հասեր էր իւր նպատակին , այլ
ևս ոչ ժողովուրդ կար իւր աչքին առջեւ և ոչ ազգա-
յին շահ , այլ միայն վրէժխնդրութիւն :

(Շարունակելի)

ՌԻԳԱՆՈՐ



Ս. Ռ.

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Աղերս մ'ունիմ քեզ , ո՛վ քաջ Սուրհանդակ ,
Խոն ինչ դադար առ , դադարի՛ քոյդ արադ .
Ունիլն զիր տաղին վերջին առկիւրտն ,
Սրտիս քընարին տրտում՝ լարերուն . . :

Քեզ համար կ'ստեն , կանցնի լուռ ու ձոր ,
Կանցնի ծովեր մեծ , լճեր , գետեր խոր .
Ընթանայ արադ զինչ թռչնիկն յեթեր
Որ թռչի բարձրէն՝ բացած իւր թեւեր :

Երբ ուղեւորես , ո՛վ քաջ սրարշառ ,
Ոչ թէ Արեւմուտք , ոչ Հիւսիս Հարաւ .
Այլ Մարմորայէն անցնիս դու Սեւ ծով
Հայրենի տունն հասնիս ապահով :

Գու անդ դադար ա՛ռ , ո՛հ իմ Սուրհանդակ ,
Կրկնել նժգեհիս սրտին հառաչանք .
Գտիր խեղճ մայրս , ինչպէս զեղբարս իմ ,
Տո՛ւր հոգեռոյս սրտիս զայս սղջոյն վերջին :

— Աստ մեռնի՛ ի սէր Ձեր Ղարէպ որդին . . :

Սամբիա

ՏԻԳՐԱՆ Գ. ԴԱՆԵԼԵԱՆ

Ձեկոյց . — Թիւրիմայութեան տեղի շտաբու
համար կը ծանուցանենք թէ , ծանուցեալ Դաշտա-
յին հանդին մէջ ձեռնոցին վրայէն մատնի դնող
պարոնը տեղացի չէր՝ այլ գրտէն եկած հիւր մը :

Լ Ե Ք Ա Յ Ի Փ

Ա Լ Թ Ո Ւ Ն Ե Ո Ւ Տ Ա Ն

ՊԻՐ ԽԸՐՍԸԶ

Ձրգան Բաղար իրթէսի կիւնի, սապահայնն էրքէն, էմին էօնիւ Թաւմիշայ ըստասիօնու զարչուսնաւ վազը պիր սարափըն տիւքեանը էօնիւն տէ, կաղէթա միւլէզգիլէրի, զարգալաթճը, թալոյ դճու վէ սիմիթճիլէրաէն միւլէքքէպ պիր գալապալըզ, հէնուզ եագայը էլէ վէրմիշ պիր սալիզի ապոզա իթմիշլէր իտի:

Թաւմիշ — Ամանըն Պօտոս, զաչըրմայան հա՛:

Ձարգալաթճը — Սէն իրահաթընա պախ, նէնէ ղէրէն, աղզընա՞ մը տիւլիւշ քի զաչըն:

Սէնիւն — Ճանըմ, նէ՞ օլմուշ պախըն:

Տաւմիշ — Նէ՞ օլաճագ, պէսպէլի պու առամ հասթալանըպ՝ հէքիմէ կիթմիշ տէ՛ հէքիմ, ալթուն հապ եութմալընըն քի էյի օլասըն տէմիշ օլմալը քի՛ սապահայնն տճէլէ թէրթիպ կէլմիշ պիզիմ սարափըն ճամէքեանընը դըրմը՝ սէքիզ լիրա գալըպ՝ եախսիի արգա արգայա եուտապիլմիշ ամա՛ սէքիզինճի պօղաչընտա գալալըզընտան՝ չիմաի չապալայօրըզ քի աղզընը աչտըրըպ դուստուրալըմ:

Սէնիւն — Հէլէ չօղա պախ հէլէ, զափասընա պի եուլընիս զուլթիլթմէլինճէ՛ օնուն աղզըտա աչըլմալ կօղիւ տէ:

Սէնիւն — Տուր պաղալըմ, ուլան նիշին եուլթուն, ղանն իթմին քի օրատա՞ մը գալաճագ:

Սալի — Պիլմէյօրըմ:

Սէնիւն — Ուշա՛խ, չօղա պախըն հէլէ, բարալարը զարչտըրմը եուլթմուշ տա՛ ութանմատան տա պիլմէյօմ տէյէ:

Սալի — Ծա՛նիմ, եօղի եուլթմիս՝ գարնիսինտա սաղլամիս:

— Սէն զօրգմա, չէլէպի, տահա զարնընա կիթմէմիշ տիր, գուրսաղը կէչմէտէն գուստուրմալը:

— Էօյլէ էօյլէ, զուստուրմալը եա՛, զուստուրմայընճա օլմալ, զափասընա զուլթիլթմէլի:

— Եուլա՛ն, ֆրլան չու էճղաճըտան պիր աղ գուստուրմա իլաճը կէթիր:

— Պէնիմ տահա սիֆտահըմ եօղ, կաղէթա սալթաճաղըմ, տուղճույու կէօնաէր:

— Հաճի, հայաէ սէն կիթ կէթիր:

— Էղաճը՝ չըրաղընըմ պէն պէ ալապար, հէմ ոիզ գուստուրմայը իշիրինճէյէ գատար, բարալար պաղրսագ եօյունու էլէ ալմըշ օլուր:

— Էօյլէ իսէ՛ էլլի տիրէմ հինա եաղը իշիրիպ՝ թալոյ դճունըն գիլմէսինտէ հապս էթմէլի, պիր սաաթտան սօնրա բարալար մէյտանա չըգար:

— Ուսթա պօտօսուն պօտուրու մունա էնտիրիլիլիս:

Սէնիւն — Մըտըր չաաուուրնտան եիմ բաախ սինէմէքի ալտըրըպ եուլթուրսախ՝ տահա չաբըխ չըլը վէրէ:

Եաբալըմ մը եաբմայալըմ մը, տէյիպ տիւչիւնիլմէքտէ իքէն, պիր տէ՛ կաղէթա միւլէզգիլիկինէ հէնուզ պաչլամըշ օլան պիզիմ թաթոս էմմի, սաթմագտա օլտուլու Նէօլօղոսա՛ Նէ՞ օ թօրոս, Ֆառ տիւ պօսֆօռա՛ Վառտա վաբօռ, վէ Լա ֆամիլ իլէ Իւլիւսթաաօնա՛ Լաֆընը պիլ ուստա Սիօն, պաղըրարագ՝ կէլիպ գալապալըզա գարըշտը, վէ մատտէի աննատըղտան սօնրա՛ գօնսօլթօյա կիլիշտի:

— Էֆէնտըմ, ծառայականիս էֆքեարը կու հարցընիք նը՝ նէ խուստուրմա կուզի նէ ալ հինտի եաղի, պինտ առաջ, բերին էրքեան միւնտէրլին տակը լայըլու եօլալմա մի կուզի:

— Ախպար, սէն նէ՞ սէօյլէյօրպըն, հէրիֆին աղզը եէմէք օտաղը մը քի էրքեան միւնտէրի պուլունսուն. կէլտին կէլմէտին մարթալալա պաչլատըն:

— Մարթալալն իշ ճիլէրա է, հէրիֆ, կաթնալեր մարդը բերանը չի բանար նը՝ պէլլի բերին մէկ քէօչէն պահեր է:

— Հա, պահեր է ամմա՛ փորին մէջը պահեր է:

— Անանկ է նը՝ հինա եաղի վէ եա սինէմէքի կերցնիլ չըլլի, պաղրսալինէրը դիւրա թափին իսէ՛ գլուխիդ էքէյիճէ պուլաչուլիլքէթէրիզի մի հանգպցնիր:

— Էյ նէ՞ եաբալըմ, չէնէ ինկիլիզ թուղի խըմյունենը:

— Ան ալ պէլալի բան է, թէքմիլ թաբան նետէ իսէ իշ տանիք, էկէք սըւրը լայըլու հօգնա մի ընել տանք:

— Նէ՞ տէյօն հաճի, նէ՞ տէյօն:

— Իհթիգան էթտիրէլիմ տէյօր:

— Ղա՛րտաշ հէչէօյլէ չէյ օլուր մու, պիզ պէրպէլմիլիլիս:

— Թաթօս ախպար պու եա, ուեար ույմաղ սէօյլէր. հէրիֆ աղզընը աչմայօր, հօգնա էթմէլէ պրազըրմը:

— Բայց ասեմ ե ոչ առնեմ էֆէնտըմ, էրկու թալու խճիոլ էրկու զարգալաթճի թիէն ու ճիլէն բունեցին մի՛ պէրպէրն ալ հօգնան ըրալ գնաց:

— Վէսէլամ, պիթտի. նէ՞ գօլայ գօլայ սէօյլէ եօրսըն. զօր ըլա էօյլէ չէյ օլուր մի:

— Բէք աճալիպ կու խօրաթիք էֆէնտըմ, զօր ըլա հէքիմ վէ զօր իլէ նիքեա՛ կուլլի տէ՛ զօր ըլա հօգնա չըլլի մի եա. հէմ ծառայականս ալթմըշ սէքիզ թարիխուն թէալթուռօյին մէջ նամի մէչ:

հուր փութոսնեագն զօրով հօգնաի բռնեմին աշօ-
քըս տեսայ:

Պու արա, բօրիսէր եէթիշիպ՝ զօնսօլթօնու-
լարը տաղըթտըլար, վէ սարիգի ալըպ հապսխանէյէ
կէօթիւրտիւէր: Թաթօս էմմի տախի, «Բայտօս»,
իշթէ էֆէնտըմ: շիմաի էֆէնտըմ, շիֆասընը պուլ-
տու էֆէնտըմ: տէտիքտէն սօնրա՝ Լաֆընը պիլ
ուսթա սիօն, պաղրարագ՝ կաղէթա սաթմադա
պաշլատը:



Ի՞նչ էր խնդրէք, պարօն:

— Դերատան ըլլալ կուղեմ, Պ. Տնօրէն, փորձե-
ցէք զիտ:

— Փորձելու հարկ չկայ, ձեր վրայ դերատա-
նական յարմարութիւն չեմ տեսներ:

— Ի՞նչու:

— Որովհետեւ ոչ պէտքերնիդ ածիլուած է և ոչ
ալ գլխարկ կը դնէք:

— Ներեցէք պարօն Տնօրէն, եթէ գիտնայի որ
դերատանական հանճարը ածելին ծայրը և գըլ-
խարկին մէջն է, փոխանակ ձեզի դիմելու՝ սափ-
րիչի մը և գլխարկավաճառի մը կը դիմէի ու վայր-
կեանի մը մէջ առաջին կարգի կատակախօս մը
կըլլայի:

Ինծի նայէ, ֆիլիպոս աղա, կիտե՞ս եա, ա-
սանկ ախում օրեր է, ամեն մարդ իր հալին կէօրէ
տունին խարճը խարճարաթը տեսներ:

— Մինչև հիմա չէինք տեսներ կոր:

— Օղջ ըլլաս, հա ամա՛ս: աս պաշխա տողաւարի
չի նմանիր. ասոր խաչ կըսեն, ծմեռը էկաւ. քի-
չէն քիչ և չէքի վատ. հազար օխա քէօմիւր, 100
օխա սօխ, թէստի մը գէյթին եաղի. կէս խաղէվի
բրինձ. կէս չուլալ չէքէր. քանի մը օխայէկ խահ-
վէ. չուլալ մը բաթաթէս. կտորճէք մը չէհրիյէ.
կէս չուլալ օլտուն ֆասուլեա. կտոր մը բախլա.
կտոր մըն ալ նօհուտ, տասն օխա գէթին մէյ մէկ
քիչ ալ սուճուխ բաստըմա. ևայլս ևայլս առնելու է:

— Եւ այս ևայլսը ի՞նչ է:

— Իշթէ տունին ամենական պէտք եղածը պիր-
տէնճէ առնել քէօչէ մը դնելու է քի մարդը ըռա-
հաթնա:

— Վէսէլամ: Ան չէ ամա՛ պախալի խանդըթ
պիտի բանանք, կնիկ, սա քէօչէի եէչիլ տիրէք
պախալը խանութին մէջ ատ խտոր մալ չունի.
չիւնքի կրակոտ աշխարհք է, նէ՞ օլուր նէ օլմադ.
հէմ ադ ըսածներդ տարուան մը զահրէ է. հիմա,
կու վախթա օրէ վաստկելով օրէ ուտելէն պաշխա
բան մը չկրնալ ընենիս տահա չի սորվեցա՞ք:

— Աման ճանրմ ֆիլիպոս աղա ատոնք բիւթիւն
պօշ լախուտներ են. ես իս գիտցածէս պէրի ախ-
տաթա չկայ կըսես. էյ փառք Տիրոջ, կապրուինք
կոր:

— Կապրուինք կոր ամա՛ մէյ մալ ինծի հոր-
ցուր քի ինտօր կապրուինք կոր:

— Ձահէր կէնէ կտոր կտոր պիտի առնես:

— Ձարար չունի կնիկ, թող առնենք տէ՛ քիչիկ
քիչիկ ըլլայ:

— Հա ամա՛ օղորմած հօգի կեսուրս կըսէր քի
խաչ ըսի՞ն մի, ամեն մարդ իր հալին կէօրէ տանը
զահրէն կը շտկէ եղեր:

— Օ չամլար պարտագ օլտու կնիկ, ան ատեն-
ները տէվէն պիլէ խուռմա կը թափէ եղեր տէ՛
կուտէն ալ նալըն կը շինուի եղեր, հիմա՛ իլաճի
համար թրիքը պիլէ չի գտնուիր կոր. արթըլա ա-
մեն բանն ալ ասոր վրայ հիսապ ըրէ տէ՛ վիճակիդ
փառք տուր, ծանդ կտրէ՛ տեղդ նստէ:

Մայրիկ, ասկէ ետքը իմ թէփսիս անանկ աղ-
ւոր կերակուր մի՛ դնել, մէկ երկու տիլիմ՝ պա-
նիր հաց դիր. ես իրիկուան աղատ ըլլամ նէ՛ ան
եփած աղւոր կերակուրդ տունը կուտեմ:

— Ինչո՞ւ ծօ եալիրում:

— Ձիւնքի շիշ պողազ վարժապետ մը եկաւ՝
առաջուց թէփսիները եօխլամա կընէ՛ կոր, որին
թէփսին քի աղւոր կերակուր մը կայ՝ մահանայով
մը յանձաւոր կընէ կոր. քի կերակուրը ինք ուտէ
տէ՛ տիլիմ մը չոր հաց անոր ձգէ:

— Վույ կածակի կայ պիլէքիմ՝ կայնէ իրիկու-
նը հօրդ ըսեմ տէ անոր հախէն կայ:

— Սախըն հա՛, ետքը հարդ վրաս բերիր ըսելով
խարէզ կը կապէ տէ՛ չոր հացն ալ չի կերցներ:

— Աղէկ կըսես, եալիրում ամա, ստտէ պանիր
հացով ի՞նչ կըլլայ:

— Ինչ է նէ մարիկ, էրկու տիլիմ պանիր հացը
տիլիմ մը չոր հացէն կէնէ աղէկ է ա՛:

—————▶▶▶▶▶◀◀◀◀—————

Միւսիւ Վիկթօռ, սաաթընա պապսանա .

— Բաւտօն միւսիւ Միշէլ, սաաթըմ իշյէմէյօր .

— Սէպէպ .

— Ագչամ գափայը գուռտուգ տա՛ սաաթը գուռմայա սանթտուգ .

— Տէսէնէ սապահտան պէրի օնուն իշին տէլի տօլու սէօյլէնիյօրսըն .

— Այըպլամա մօնշէն, սանա էվիլէտէն օգուտուգ կիւնահըմըղը, վէ նասըլ քի պաղը ալա-
ըը պօզուլմուշ սաաթ 13-17 վուրսըր՝ էօյլէ տէ
գուռուլու գափա տէլի տօլու սէօյլէմէյէ մէճպուր
օլուր .

— Աննիկ, պու կիւն մաղաղատա պիր աճը տույ-
տում՝ քի թարիֆ իտէմէմ. տույարօան այգընը սօյ
աճընաճագօրն .

— Բա նէ՞ տիր աճապա, կէնէ պու արալըդ
սօյճա չարգըմըղ բէք թէրս տէօնմէյէ պաշլատը .

— Պիգիմ Անթուան Եօգ մու . զաւլալը հիշ
տուէլլօ պիլմէքսիզին, մատամըն սէվկիւլիսիյլէ
տուէլլօյա թուլթուլարագ ֆէնս տէրէճէ Եարալան-
մըշ .

— Յիսուս մարիամ, պու նէ՞ խենդիք .

— Խենդիք տէ սէ՞օզմիւ, ատէթա պուտալա-
լըդ, հիշ տուէլլօ պիլմէյէն պիր ատէմ տուէլլօյա
չըգա՞րմը .

— Էյի տէտին, միւսիւ Բասկալ, սէնտէ պիլիր-
սին հիշ տուէլլօ Եարմագ ,

— Խայըր .

— Էօյլէ իսէ շու Եէնի կէլէն ֆրանսըղտար սէն-
տէ կիթ էօյրէն, իգթիզալը շէյ իմիշ .

— Բա Սիմա տուտու, Հոռսփը աղշիկը կը
կարգէ կոր Եղեր, իրաւ՞ է .

— Հա Եա՛ .

— Պարէ Եախըշըլը՞ է .

— Ես տահա չիտեսայ ամա բէք հիմակու ուր-
րիսինէք ճահիրներէն է Եղեր .

— Սիվրի սինէկը ի՞նչ է .

— Իշթէ կըթեալին անանկ կըսեն Եղեր .

— Էյ անօր սիվրիսինէք չեն ըսեր, Սիվրիզէ
կըսեն .

— Ի՛շ կիտնամ. քուրուկ, Մարինօսին փեսին
համար՝ ալ ատանկ ըսին ամա կարգուելէն Ետըր
սիվրիսինէկի պէս պաշլայեց աները, զսքանչը ու
պալաղները խոցել . սէօյլէյէնէ պագմա սէօյլէտէ-
նէ պագ կըսեն . պիր թիւրիւ նէրսէս չիգար կոր
անանկներուն սիվրիզէ ըսելու .

Իւր հաւատարմութեամբ հանրածա-
նօթ աշխատաւոր երիտասարդ մը, կուզէ
վաճառատան մը մէջ օգնական գրագրի և
կամ ուրիշ յարմար պաշտօն մը վարել. ուզո-
ղը պէտք է գիմէ Ղալալիա Գօմէսիօն խան
թիւ 69

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ

1889

Դին 40 փարա

Կը գտնուի Ագգային Հիւանդանոցի Հոգաբար-
ձութեան գրասենեակը, Կ. Պօլիս, Մեծ-Նոր խան
միջնայարկ, Թիւ 48 49 50, և բոլոր Հայ գրա-
վաճառաց քով .

Հիւանդանոցի Հոգաբարձութեան կնիքն չը
կրօղ օրինակներն վաւերական չեն .

ՇԱՀԻՆՏ ԳՈՒՄՐԱՆԻԱՍԸ

ՍԻԿԱՐԱ ՔԵԱՂԱՏԵՔ ՏԵՊՊՕՍՈՒ

ԻՍԹԱՆՊՈԼ ԱԼԱՃԱ ՀԱՄԱՄ

Ապուտ էՅ. խանը գուրպիմտէ Ն : 42

Պաշտօնէի սերէհվալը Եէնի քիւշատ օլան Տե-
բօզիթօտա՝ Էվրօանըն վէ պախաւուս Ֆրանսանըն
էն մէշուր ֆապրիգալարընտան պերինճի նէվի սիկա-
րա քեաղընը թէտարիք իթտիրիուպ, իմալ վէ ֆի-
րուլթ օլունմագտա տըր . Միւսիւ Էհալինին
իսթիմալ իթտիկի տուխանըն նէվի հէր գանդիսի օ-
լուր իսէ օլուն, ա՛լա խալիս բերինճտէն մա՛մուլ օ-
լան մէքքիւր քեաղընըն էլիկի անճագ աղըզա ֆէվ-
քէլատէ լեզգէթ վէ թաթլըլըք կէթիւմէքտէն իպա-
րէթ տիր . կէրէք իսթամպօլ վէ կէրէք թաշարալար
իլուն վուգու պուլաճագ սըբարըշլար սուհուլէթլէ
վէ աթիտէ միւնտերիճ շարթլար իւզրէ իճրա օլունուր .
Պիրինճի .— Կէօթէրիլէն նիւմունէլէր մուճիպինճէ
կէրէք քեաղընտարըն ճիսի վէ կէրէք ատէտլէրի տօղ-
րու օլաճագ տըր .

Իքինճի .— Սըբարըշլարը կիւնինտէ թէսիմիտուպ
էօյլէ . Պու կիւն օլմատը, Եարըն օլաճագ, կիպի սէօզ-
լէր իւն միւշտէրիլէրի ալտաթմաեաճագ տըր .
Իւշիւնճի .— Կէրէք քեաղընտարըն արալարընտա վէ
կէրէք բէսիմէրտէ ա՛լա թաղիւս պուլունմաեաճագ .
Թէշիֆէ բաղպէթ պուլունրաճագ էֆէնտիլէր իշպու
իլունմագտա միւնտերիճ շարթլարը թէմալէն իճրա
իթմէքտէ օլունուլունմուլթ թաթտիգ իտէճէքէր .

ՇԱՀԻՆՏ ԳՈՒՄՐԱՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԼԸՆԹԱՅԼ

Դրամագլուխ Անգլ. Ոսկի 3,000,000. Պահեստի
դրամ 243,127 Հասոյթ 1887 Տարւոյ 1,932,320

ՆՕՐԹՀ ԲԸՆ ԷՇՈՒԲԸՆԾ

Դրամագլուխ Անգլ. Ոսկի 3,000,000. Պահեստի
դրամ 1,421,200 Հասոյթ 1887 Տարւոյ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ
ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց
տուած գրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար
զիրենք ներկայացնել, նոսի իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար
մինչև ցարգ տուած փութանին 15,000 000 Անգլիական Ոսկին կանցնի.



ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



Դրամագլուխ Անգլ. Ոսկի 5,000,000. ՄԱՐԻԹԱՅՄ. Պահեստի դրամ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շողենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն եւ դրամ-
ածարներն խիստ օգտակար պայմանաւ. Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուղղող կը
հրաւիրուին դիմել Ղալաթիա Գոսիօն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն,
առ ԳԱՌՆԻԿ Յ, ՍԵՐՈՐԵԱՆ, Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց.

— 44 —

Թռիւղ. — Զքեղ հոն ձգելու էի, վրան զի
խոհեմութիւնը անանկ կը պահանջէր. բայց
առանց ալ քեզի չէի կրնար ապրիլ. քու կա-
րօտդ կը քաշէի, կարօտութիւն ունէի սըլ-
տի մը՝ որ զիս կը սիրէր.

Պլանշ. — Դոնէ քու վրայօքդ բան մը չես
խօսիր ինծի.

Թռիւղ. — Ամենեւին դուրս մի ելլեր.

Պլանշ. — Երկու ամիս է որ հոս եմ, հազիւ
ուրն անգամ եկեղեցի գացած եմ.

Թռիւղ. — Ապրիս աղջիկս, շատ աղէկ.

Պլանշ. — Դոնէ սիրելի հայր իմ, մօրս վրա-
յօք քիչ մը բան խօսէ.

Թռիւղ. — Ո՛հ, նորէն դառն յիշտականեր
մի՛ զարթուցաներ սրտիս մէջ, յիշեցնել մի՛
տար ինձ ժամանակաւ գտած կինս, որ եթէ
դու քովս չըլլայիր՝ երազիս մէջ դատայ պիտի
ըսէի, կին մը՝ որ ուրիշ ամէն կանանց բնաւո-
րութեան հակառակ, զիմ մինակուկ, հիւան-
դոտ, խեղճ և ամենէն նախատուած տեսնե-
լով՝ թշուառութեանս ու տձեւութեանս վրայ
խղճալով սիրեց զիս, բայց աւա՛ղ, խեղճը մե-
ռաւ իր հաւատարիմ սիրոյն, այն հրեշտա-
կային գաղտնիքը հետը մէկտեղ գերեզման

— 45 —

տանելով, անանկ սէր մ'էր այն՝ որ փայլակի
մը պէս անցաւ վրայէս, և իբրեւ արքայու-
թեան ճաճանչ մը ինկաւ ի գոթս, այսինքն
իմ վրաս. Հոգը, որ միշտ պատրաստ է զմեզ
ընդունելու, կը ճնշէ հիմա անոր սիրտը, ուր
կը հանգչէր՝ երբեմն իմ գլուխս. Հիմա դուն
մինակ մնացիր ինծի... փա՛ռք քեզ Աստ-
ուած.

Պլանշ. — Արդեօք հիմա ի՞նչպէս սիրտդ
կայրի, բայց ալ բաւական է, չեմ ուզեր որ
այդպէս արցունք թափես, սիրտս կտոր կտոր
կըլլայ.

Թռիւղ. — Հապա խնդալս տեսնէիր, ի՞նչ
պիտի ընէիր.

Պլանշ. — Հայր իմ, ի՞նչ ունիս, ի՞նչ կզգաս,
դոնէ անունդ իմացուր ինձ.

Թռիւղ. — Անունս իմացնելէն ի՞նչ կելլայ,
հայրդ եմ, այոջափը բաւական է, այս տե-
ղէն դուրս ո՛վ գիտէ թերեւս սարսափին ինձ-
մէ, մէկը կը նախտուէ զիս, միւսը կանիծէ,
անունս եթէ իմացնէի, ի՞նչ պիտի ընէիր, այ-
սու. ամենայնիւ, կը փափաքիմ քու քովդ, հոս
աշխարհիս մէկ անկիւնը քաշուած, ուր ան-
մեղութեան ի զատ ուրիշ բան մը չի տես-

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ
Ա Մ Ա Ռ Օ Տ
Պ Ա Տ Մ ՈՒԹԻՒՆ
Հ Ա Յ Ո Ց
Ի ՊԵՏ
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ
Դին 100 բարա

Պօղոսեան Բիւզանդէֆէնտի աշխատասիրած սոյն նոր Ազգային պատմութիւնն, ոչ միայն իւր պարունակութեամբ և լեզուին մաքրութեամբ, այլ նաև նմանը ցարգ չտեսնուած դնոյ աժանութեամբ խիստ յարմար դասագիրք մ'է մեր ազգային վարժարանաց համար:

Կեդրոնատեղին է հեղինակին զրատուն, Չագմագճըլար թիւ 36

ՏԵՐ - ԽՄԲԱԳԻՐ
ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿ.
معارف نظارت جليله سلك رخصتنامه سيله طبع اولشدر



Յ Լ Օ Ռ Ի Օ ԵՒ Ռ Օ Պ Ա Թ Թ Ի Ն Օ

ՇՈԳԵՆԱԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՏԱԼԱԿԱՆ
Աբգ ԲԵՐԵՆԻ ԸՆԴ ԴԵ ՄԵՇԵՐԵՆԻ Ե ՍԵ ԶԳԵ

Ամեն երկուշաբթի Կ. Պոլսէն կը մեկնի ի Մարտիկա, հանդիպելով Տարաւանի, Զմրուդին, Քիոս, Պրէօն, Քաթանիա Մէսինա, Բալէրմո, Նաբոլի, Լիվօնո և ձէնօվա: (Սոյն չողենաւ երկու շաբաթ անգամ մը միայն Զմրուդիա և Քիոս չի հանդիպելով Սելանիկի համբով կը մեկնի:)

Ամեն երկուշաբթի Սուլինա, Կալաց և Խալապիլ:
Ամեն Զորեքշաբթի Պրէօն, Պրինալի, Պար, Անքօնա, Վենէցիա և Թրիէսթէ:
Ամեն Զինգշաբթի ուղղակի յՕտէնա:
Երկուշաբթի անգամ մը Եչ. օրեր Սամօն, Տրապիզոն Պաթում: Իւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղևորաց: Չափաւոր գին: Օրինաւոր գնեքով վաճառք կընդունուի Եւրոպ. երկիրներու համար: Դիմել առ Պոլսոյ մասնաճիւղն Պաճէ գաբու թիւ 59

— 46 —

նուիր, կը փափաքիմքու հայրդ ըլլալու, բայց պատկառելի հայր մը, վսեմ, նուիրական և սրբազան սեպուած:

Պլանչ.— Հայր իմ.

Թախ.— Կ'այ արդեօք ուրիշ սէր մ'ալ որ իմ սրտիս պատասխանէ, աշխարհիս վրայ ամեն բան կատեմ մինակ զքեզ սիրելու համար, քովս եկուր նստէ որ այս բանին վրայ խօսինք. ըսէ՛, կը սիրե՞ս հայրդ, հիմա որ քովէ քով և ձեռք ձեռքի տուած ենք, ալ ի՞նչ պէտք է ուրիշ բանի վրայ խօսիլ, ո՞վ իմ սիրասուն աղջիկս. Աստուած զքեզ մինակ իմ երջանկութեանս համար պարգեւած է ինծի. ուրիշները աղգական, բարեկամ, կին, ամուսին, զաւակներ, ալ ի՞նչ ըսեմ, շատ մը մխիթարութիւններ ունին, իսկ ես՝ քեզմէ զատ ուրիշ բան մը չունիմ. ոմանք հարուստ են, թողըլան, իմ դանձս ու ամեն ստացուածքս դու ես միայն. շատերը երիտասարդութեան հետ կանանց վրայ սէր ալ ունին, հպարտութիւն չքեղութիւն և առողջութիւն փառաւորապէս կը վայելեն, և գեղեցիկ ալ են, բայց ես, կը տեսնես որ մինակ քու գեղեցկութիւնդ ունիմ ինծի մխիթարանք. ո՞վ իմ նազելի աղ-

— 43 —

ՏԵՍԻԼ Գ.

Թախ. Պլանչ. (Յետոյ) Պէրարտ

Թախ.— Ո՛հ, գիրկս եկուր, դուստր իմ սիրեցեալ. . . երբ քու քովդ լինիմ, ուրախութիւն մը կ'զգամ, բոլոր նեղութիւններս կը թեթեւան. ըսէ՛, սիրելի զաւակս, հոս հանգիստ ես.

Պլանչ.— Ա՛հ, ի՞նչ բարեօրտ հայր մը ունիմ.

Թախ.— Զքեզ շատ կը սիրեմ, ըստ որում դու ես իմ արիւնս, հոգիս ու կեանքս. . . եթէ զքեզ չունենայի՝ իմ վիճակս ի՞նչ պիտի ըլլար ո՞վ Աստուած իմ:

Պլանչ.— Բայց ինչո՞ւ կը հառաչես, սրտիդ մէջ գազանի վիշտ մը ունիս, զոր աղջկանդ յայտնելու ես. . . եղո՞ւկ ինձ, որ ընտանիքիս ո՞վ ըլլալը չգիտեմ:

Թախ.— Զաւակս, ընտանիք չունիս դուն:

Պլանչ.— Անունդ անդամ չգիտեմ:

Թախ.— Գիտնաս ի՞նչ պիտի ընես.

Պլանչ.— Իմ մեծցած քաղաքիս մէջ, որ Շինեօն կը կոչուի, դրացիներս քու գալէդ առաջ զիս որբ կը կարծէին: